ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

1 դեկտեմբեր 2017

ԸՏ-023-Ե-09

Հարգելի՛ Սեդա Ղուկասյան,

Ի պատասխան Ձեր՝ 25.11.2017թ.-ի հարցմանը, հայտնում եմ, որ ՀՀ ԱԺ պատգամավորների՝ այդ թվում իմ՝ քաղաքացիների ընդունելության ժամանակացույցը ԱԺ ընդունարանում սահմանված է հանձնաժողովների կողմից (իմ պարագայում՝ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի): Իմ մասնակցությամբ քաղաքացիների մոտակա ընդունելությունը նշված ձևաչափի շրջանակներում տեղի կունենա սույն թվականի դեկտեմբերի 22-29 ընկած ժամանակահատվածում:

Ինչ վերաբերում է քաղաքացիների հետ հաղորդակցման այլ ձևաչափերին, ապա տեղեկացնեմ, որ առավել ինտենսիվ եղանակով դրանք տեղի են ունեցել ««Զինապարտության և զինվորական ծառայության մասին»» օրենքի նախագծի հիմքում դրված ««Ես եմ»» և «Պատիվ ունեմ»» նախագծերի հանրային բաց քննարկումների ընթացքում: Քննարկումները տեղի են ունեցել սույն թվականի հունիս և հուլիս ամիսներին Հայաստանի տարբեր մարզերում: Քննարկումների ընթացքում քաղաքացիների կողմից հնչեցված առաջարկությունները ամփոփվել և փոխանցվել են օրենսդրական նախաձեռնություն իրականացրած գերատեսչության պատասխանատուներին: Մասնավորապես առավել հաճախ քաղաքացիները բարձրացրել են ««Ես եմ»» ծրագրով նախատեսված ծառայության ավարտին ստացվելիք 5մլն դրամի նպատակային ծախսի եղանակների սահմանափակման խնդիրը՝ առաջարկելով ընդլայնել այն: Բացի նախատեսվող նպատակներից (ուսման ծախսի փոխհատուցում, ֆերմերային գործունեություն, անշարժ գույքի ձեռք բերում) առաջարկվում էր ընդլայնել ցանկը՝ նախատեսելով կոոպերատիվ հիմքերով համատեղ բիզնեսի հիմնում, բեռնատար կամ մարդատար ավտոմեքենաների գնում, ամուսնական ծախսեր և այլն: Նախատեսված է տվյալ առաջարկների քննարկումը օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակման ընթացքում:

Ձեր կողմից նշված ժամանակահատվածում ստացել եմ թվով 9 գրավոր դիմում:Վերջիններս եղել են անձնական բնույթի հարցերով (սոցիալական, առողջապահական, զբաղվածության և այլն) և տարբեր գերատեսչությունների հետ փոխհարաբերությունների վերաբերյալ: Բոլոր քաղաքացիների դիմումները վերահասցեագրվել են համապատասխան ստորաբաժանումների: Քաղաքացիներից մեկը, չբավարարվելով բանավոր պարզաբանումներով, այցելել է աշխատասենյակ, որտեղ ստացել է սպառիչ պարզաբանումներ իր առողջական խնդիրների լուծման ընթացակարգի վերաբերյալ (հաշմանդամության կարգի ստացում, պետական պատվերից օգտվելու ընթացակարգ և այլն):

Բացի վերոնշյալից, իմ կողմից արվել է համագործակցության հրապարակային կոչ շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին՝ ուղղված կրթության ոլորտում և աշխատաշուկայում առկա խնդիրներից մեկի լուծմանը (https://www.facebook.com/arman.saghatelyan/posts/1697544133607179) : Կոչին արձագանքեցին բազմաթիվ կազմակեպություններ և անհատներ՝ հարցի վերաբերյալ հղելով շուրջ 20 գրավոր առաջարկներ: Տվյալ առաջարկների որոշ մասը ընդգրկվել է կրթության և գիտության և աշխատանքի և սոցիակալան հարցերի նախարարությունների հետ ընթացող քննարկումների փաթեթում՝ օրենսդրական փոփոխություններ կատարելու նպատակով:

Հ. Գ. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ @gmail.com դոմենային հասցեից ստացված նամակը հնարավորություն չի տալիս միանշանակ նույնականացնել նամակագրի և պարբերականի փոխկապակցվածությունը, ուստի տվյալ պատասխանը ուղարկված է պարբերականի պաշտոնական էլեկտրոնային հասցեին:

Հարգանքով՝

ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԱՐՄԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ